ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունիսի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, մատուցվեց հերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի փոնակատարությունների առիթով Սուրբ Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը՝ թեմի հոգևորականների և բազում հավատացյալ ուխտավորների հետ:

«Եվ չնայած 1930-1989 թթ. Արցախ աշխարհը հալածվում էր կրոնական տեսանկյունից, բայց այսօր, բարեբախտաբար, ունենք այնտեղ հավատք, ունենք թեմ, ունենք անկախ հանրապետություն, մեր հայկական իշխանությունը, որտեղ կարող ենք վերանորոգել մեր ուխտը: Բայց մենք այսօր եկել ենք այստեղ՝ մեր ծննդավայրը, մեր հոգևոր տունը, որովհետև ամեն մի հայ ծնվում է այս մկրտության ավազանից: Սա է հոգևոր արգանդն ամեն մի հայի համար: Սա ամենայն հայոց տունն է՝ գահանիստ տունը, և մենք բոլորս եկել ենք այստեղ վկայակոչելու ի դեմս ձեզ բոլորիդ Աստծո ու Հայրապետի առջև, որ մենք հայ ենք, հայ քրիստոնյա ենք, այդպիսին էլ կմնանք Արցախ աշխարհում, և եկել ենք ծնրադրելու՝ ասելով. «Մենք հավատարիմ հոտն ենք Հայ Առաքելական Եկեղեցու, հոգևոր զավակներն ենք մեր Հայրապետի, և մեր ուխտը եկել ենք այստեղ նորոգելու, ավելի զորացնելու, որպեսզի մեր հավատքը փայլելով փայլի և լուսավորի մեր փրկության, մեր խաղաղության ճանապարհը դարերով»,- ասաց Սրբազան Հայրն իր քարոզում:

Հանուն Նորին Սրբության և Մայր Աթոռի միաբանության ուխտավորներին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Հոգեշնորհ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Պատարագին ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանը, ՀՀ-ում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Արման Մելիքյանը, պաշտոնատար այլ անձինք, երջանկահիշատակ Գարեգին Ա Հայրապետի քույր Եսթեր Սարգսյանը, ազգային բարերարներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, մտավորականներ և բազմաթիվ հավատացյալներ:

Ս. Պատարագի վերջում, երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան տարելիցի առիթով, լուսահոգի Հայրապետի շիրիմի մոտ, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն:

Հավարտ Ս. Պատարագի ուխտավորներին Վեհարանում ընդունեց Նորին Սրբությունը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ